ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

Կահիրեում Հայաստանի Հանրապետության դեսպանի և Եգիպտոսի Արաբական Հանրապետության ԱԳՆ Արևելյան Եվրոպայի վարչության պետի կայացած հանդիպմանը Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության հարցերը քննարկելիս եգիպտական Կողմը խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարությանը ներկայացնել համաձայնագրի նախագիծ (ՀՀ ԱԳՆ-ից 30.03.2010թ. ստացված N13/04455 գրություն), որն ուսումնասիրելուց հետո Եգիպտոսի Արաբական Հանրապետության պաշտպանության նախարարությունը կներկայացնի իր կարծիքը և առաջարկները համապատասխան գործընթաց սկսելու համար: Ղեկավարվելով "Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը մշակել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծ: Վերոնշյալ Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև պաշտպանության ոլորտի հետևյալ հարցերի շուրջ համագործակցություն. պաշտպանական պլանավորում, քաղաքացիական վերահսկողություն զինված ուժերում, միջազգային կայունացման գործողություններ, միջազգային անվտանգության պարտավորություններ, պետության պաշտպանության և անվտանգության ոլորտներում փոխհարաբերությունների իրավական կարգավորում, ռազմական իրավագիտություն, զինված ուժերում ծառայության իրավական կարգավորում, զինված ուժերում անձնակազմի կառավարում, սոցիալական ապահովության համակարգ, ռազմական արդյունաբերություն և սպառազինությունների ծրագրեր, ռազմական կրթություն, վերապատրաստում և վարժանք, թիկունքային ապահովում, ռազմական բժշկություն, հատուկ նշանակության զորքերի վարժանքներ, ռազմական ավիացիա, ռազմական տեղագրություն, հրետանի և հակաօդային պաշտպանություն, ինժեներական ծառայություն, ռադիո-էլեկտրոնային պայքար, ռազմագիտություն և հետազոտություններ, մշակութային և սպորտային միջոցառումներ, ճգնաժամերի կառավարում, շրջակա միջավայրի պահպանություն և բնական, էկոլոգիական ու արդյունաբերական աղետների վթարների և դրանց հետևանքների վերացման կառավարում զինված ուժերի լիազորությունների

շրջանակներում: Համաձայնագրի նախագծով նախատեսվում է, որ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են համագործակցել նաև այլ ուղղություններով: Փաստաթղթով սահմանված են համագործակցության իրականացման ձևերը: Նախատեսվում է, որ Կողմերը համագործակցության իրականացման համար նշանակում են լիազորված մարմիններ (ՀՀ կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, ԵԱՀ կողմից՝ ԵԱՀ պաշտպանության նախարարությունը), ինչպես նաև նախատեսված են Կողմերի ֆինանսական պարտավորությունները: Համաձայնագրի նախագծով սահմանված է, որ այն կնքվում է անորոշ ժամկետով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում գործում է հայկական մեծ համայնք, Եգիպտոսի Արաբական Հանրապետության Զինված Ուժերը համալրված են նաև նախկին խորհրդային միության սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, ինչպես նաև նպատակ հետապնդելով Եգիպտոսի Արաբական Հանրապետության հետ սկսել պաշտպանության բնագավառում սերտ համագործակցություն և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությանը համապատասխան, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի կնքումը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս. ՕՀԱՆՅԱՆ